

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ա Կ Ն Ա Ր Կ Ն Վ Ի Ր Վ Ա Ծ Ա Ր Ց Ա Խ Ի Ն

1988 թ. փետրվարի 20-ին Ան-
տիկ Կարաբաղի Ինքնավար Մար-
զի ղեկավարության խորհուրդը
ընդունեց ղեկավարության
ընդունելու և Ազրբեջանի ԽՍՀ-ների
Գերագույն խորհուրդներին՝ քննե-
լու և արդարացիորեն լուծելու
Կարաբաղի Ինքնավար Մարզի քր-
եակաբանության Հայաստանի ԽՍՀ-ի
կազմի մեջ մտնելու պահանջը:
Այդ որոշումը ընդունելու ընթաց-
քում և զրանից հետո մտնելու
կերտում և Հայաստանում վերա-
կառուցման և գեմոկրատիայի
պաշտպանության լուծումը ներառ-
ված է 70 տարի առաջ
կարգից անարդարացիորեն բա-
ժանված Հայ մարզի կրկին մեծ
համաձայնությամբ, որոնց միակ պա-
հանջը արդարության վերահաստա-
տումն էր՝ Արցախի բնակչության
ինքնորոշման գեմոկրատիայի
բավարարման անհաշիվ: Սակայն
ընդդիմադիր կողմը՝ ազրբեջանա-
կան կառավարությունն ու նրա
գրասենյակը պատասխանեցին ստա-
նդարտային կողմից, Բաքվի, Կի-
րովաբադի, Խանլարի, Գառաբա-
նի և մյուս հայաբնակ շրջաննե-
րում բորբոքած բնություններով:
Այնուամենայնիվ, Կարաբաղյան
շրջանը ընդհանրապես բնության առ-
ջև, Հայաստանում և Արցախում
կազմակերպվեցին ժողովրդի տա-
րբարյան կույթները ղեկավարող
կոմիտեներ և այլ կազմակերպու-
թյուններ, որոնք իրենց վրա վերց-
րեցին գեմոկրատիայի ճանա-
պարհով հարցը արդարացիորեն
լուծելու դժվարին դործը: Ավելի
բան մեկ և կես տարի Կարաբաղ-

յան շարժումը մարտում է հաղ-
թահարելու բոլոր այն ուժերին, ո-
րոնք ամեն զենք բարդություններ
են սանցում և խուրհուրում յո-
րաբանչուր գեմոկրատիայի նա-
խաձեռնություն: Այդ պայքարն ու-
նեցել է և վերելքի, և հուսահա-
տություն պահել, սակայն պահպա-
նել է իր ամբողջականությունը և
համախմբել սփյուռքի և Հայաս-
տանի գրեթե բոլոր առողջ հաս-
րակական խավերին: Վերջին մեկ
և կես տարվա ընթացքում ԽՍՀ
կենտրոնական և Ազրբեջանական
ԽՍՀ ողջ պետական մեխանիզմը և
ազմինիստրատիվ սիստեմը, որոնց
ձեռքին են մնում մամուլը, հե-
ռուստատեղությունն ու ռադիոն,
կեղծիքի ու ստի լայն կիրառմամբ
փորձում են ստվեր ձգել Արցախ-
յան շարժման և նրա ղեկավարնե-
րի վրա, դրդել հայտարարված
ներով ու թշնամական հողմանե-
րով կեղծելով պատմական իրա-
կանությունը, փաստորեն ազգա-
յին ու կրոնական անհանդուրժողա-
կանություն են սերմանում հայ և
ազրբեջանցի ժողովուրդների մի-
ջև: Այնուամենայնիվ, Արցախի
բնակչության արդարացի պահան-
ջին զրականորեն արձագանքեցին
մեր երկրի գեմոկրատական շար-
ժումները, որոնք իրենց գործու-
նեությունն են ծավալել ԽՍՀ տա-
րածքում:



Groupement pour les Droits des Minorités

բողման հարց, այն գուրս եկավ
նաև միջազգային ասպարեզի նվա-
խորհրդարանը, ԱՄՆ-ի կոնգրեսի
սենատը և աշխարհի մի շարք եր-
կրների բարձրագույն օրենսդրա-
կան իշխանություններ սատար
կանցնեցին այդ ձգձգվող խնդրի
արդարացի լուծմանն աջակցելուն
և որոշումներ՝ ընդունեցին՝ պաշտ-
պանելով արցախցիների ինքնա-
բողման իրավունքը: Այդ որոշում-
ների ընդունմանը նպաստեցին վեր-
ջին մեկ և կես տարվա ընթացքում
աշխարհի տարրեր երկրներում
լույս տեսած Արցախի պատմու-

թյունը լուսարանող և բազմաթիվ
ներկա իրավիճակը ներկայացվող
ընթացակարգում: Հարցի ման-
րակրկիտ բնությունն ու հաս-
րակական կարծիքի և ավտոմատ
գործը ստանձնեցին մի շարք ա-
տոզավոր հասարակական կազմու-
թյուններ և հողման:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Կերպուցություններ, որոնցից մեկը՝
Փարիզի «Ազգային իրաքամաս-
նությունների պաշտպանության
խումբը» վերջերս հրատարակեց
«Կարաբաղ. հայկական տարածք
Ազրբեջանի կազմում» պատմական
սեղեկատու ակնարկը: Հեղինակ-
ներն են Այսրկուլիասի արվեստի
պատմաբան Պատրիկ Տոնապետ-
յանը և Կիլիկիա երկրամասի ու
Հայաստանի պատմության հմուտ
գիտակ Կլոդ-Արմեն Մուրաֆյանը:
Գիրքը բաղկացած է երեք մա-
սից. ա) Կարաբաղի պատմությու-
նը հնուց մինչև ԺԹ դարի վերջը
(հեղինակն է Պատրիկ Տոնապետ-
յանը), բ) Կարաբաղը Ի դարում
(հեղինակ՝ Կլոդ-Արմեն Մուրաֆ-
յան), գ) Փաստաթղթերի հավել-
ված: Վերջում տրված է հիմնական
զրականություն ցանկը (մոտ 120

անուն մեկագրություն և հողման):
Արվեստով ձևավորված այս զըր-
բում հրատարակված է յոթ քար-
տեղ և բազմաթիվ սև-սպիտակ ու
գունավոր լուսանկարներ (ԺԹ դա-
րի մամուլում հրատարակված նյու-
թեր, հուշարձանների լուսանկար-
ներ և այլն):
Առաջին մասում բնորոշում տե-
ղեկություն է տրվում երկրամասի
հին անվանումների և պատմական
աշխարհագրության վերաբերյալ,
ընդգծվում է, որ 4388 քառ. կմ
տարածք ունեցող Լեռնային Ղա-
րաբաղի Ինքնավար Մարզը այժմ
գրադեցնում է Մեծ Հայքի Ար-
ցախ նահանգի միայն լեռնային
հատվածի մի մասը: Պատրիկ Տո-
նապետյանը այնուհետև շարա-
դրում է Հայոց Հյուսիս-արևելյան
կողմանց՝ Արցախի և Ուտիքի ան-
ցած պատմական ուղին, հիմնվե-
լով Ասատուր Մետեղականյանի,
Բաղդատ Ուլուբաբյանի, Ալեքսան-
Հակոբյանի և այլոց աշխատու-
թյունների վրա, հանրամատչելի
կերպով շարադրում է այն փաստը,
որ Ուտիքն ու Արցախը Հայաս-
տանի կազմից Աղվանից մարզպա-
նությունն սահմանների մեջ են
մտցվել Ե դարի ընթացքում: Չ
դարում Աղվանի քաղաքական և
հողեր կենտրոնները Քուր գետի

ձախափնյակից սեղափոխվում են
աշափնյակ, որ և կառուցվում է
Աղվանից մարզպանության եր
մայրաքաղաքը՝ Պերոզ-Կավատ
կամ Պարտավ անունով: Քննարկ-
վում են այդ տարածքի հողեր
կյանքի այնպիսի կարևոր երևույթ-
ներ, ինչպիսիք էին Դ գարի սկզբ-
բում քրիստոնեության ընդունումը
և Մեսրոպ Մաշտոցի կողմից Ե
դարու բուն Աղվանքի ցեղերից
մեկի համար զրի ստեղծումը: Չը-
նայած Քուրի ձախափնյակում այդ
զրով մեզ են հասել մի քանի ար-
ձանագրություններ, այնուամե-
նայնիվ այն չի օգտագործվել բո-
լոր բուն աղվանական ցեղերի կող-
մից և մտացություն է մատնվել:
Աղվանից մարզպանությունում
պարզ բազմաթիվ ցեղերի և ժո-
ղովուրդների համախմբման զոր-
ծում մեծ դեր է կատարել հայկա-
կան զավառների բնակեցումը այդ
երկրամասին: Արցախն ու Ուտիքը
մինչև վերջ էլ պահպանելով ազ-
գային դիմագիծը, կամաց-կամաց
իրենց ձեռք են վերցրել մարզ-
պանության հողեր և քաղաքա-
կան կյանքի կառավարումը: Ա-
կայն Թ գարից հետո, երբ հայա-
ցել էր ձախափնյա Աղվանքի բո-
նակչության նշանակալի մասը,
հակադրվելով Հայաստանի Բազ-

րատունյաց թագավորությանը, Ար-
ցախի և Ուտիքի տիրապետող զա-
սակարգը, շարունակելով մարզ-
պանական շրջանի քաղաքական ա-
վանդույթը, սեփական տարածքը
և հայտարարեց Աղվանք: Դրա-
նով իսկ սատար կանգնեց այն
բոլոր կենտրոնախույս ուժերին, ո-
րոնք զլուխ էին բարձրացել Բազ-
րատունիների զեմ վասալառակա-
նում, Սյունիքում, Տայքում, Տա-
րոնում և այլուր: Միհրանյանների
և Առանշահիկների նշանավոր իշ-
խանություններից հետո Թ—Ժ գա-
րերում Արցախում ստեղծվեցին
Փառիսոսի, Դիզակի և Խաչենի իշ-
խանությունները, որոնց հանաչե-
ցին արարներն ու բյուզանդացի-
ները: Արցախը և Ուտիքի կենտրո-
նախույզ զազափարախությունը
իր զազաթնակետին հասցրեց Ժ
դարի հայ պատմիչ Մովսես Դաս-
խուրանցին, որի երկի աշխուրջ
ուսումնասիրողը Կարոզ է հա-
վաստիանալ, որ պատմիչն իրեն
և Արցախի ու Ուտիքի բնակչու-
թյանն աղվան կոչելով սահմանա-
դատում է Բազրատունյաց թագա-
վորության տարածքում ապրող հայ
բնակչությունից, սակայն միա-
ժամանակ Քուրի աջափնյակի հայ-
կական բնակչությանը հակադրում
է ձախափնյակի բուն աղվանական,
որպես ժողովուրդ չկազմավորված
ցեղախմբերին: Հայոց արևելից
կողմանց՝ Արցախի և Ուտիքի վար-
չատարածքային և կենդեցական
բաժանման կենտրոնախույս ճղ-
տումները այնուհետև այլևս չխո-
րացան, իսկ թուրք-սելջուկների
նվաճումներից հետո մարեցին: Այդ
տրամադրությունների հիշողու-

թյունը պահպանվեց մինչև ԺԹ
դար՝ Աղվանից կաթողիկոսության
անվան մեջ: Պատրիկ Տոնապետ-
յանն անդրադառնում է աղվան
աերմինի երկիմաստությունը, որը
զենու շարունակում են օգտագոր-
ծել ԺԳ—ԺԸ դարերի հայ պատ-
միչները՝ հիշելու համար Արցախ
և Ուտիք զավառների բնակչույթյա-
նը և Աղվանից կաթողիկոսությանը
ենթակա տարածքները: Միջնա-
դարյան սկզբնադարերի տեղե-
կությունների այս երկակիությունը
հնարավորություն է տվել ազրբե-
ջանական միտումնավոր պատմա-
գրությանը՝ աղվանական հայտա-
բարել է կենսային Կարաբաղի
1800-ից աղվան հայկական հուշար-
ձանները, որոնք հայկական են ի-
րենց ոճով, մեսրոպատու արձա-
նագրություններով: Հեղինակն
անդրադառնում է ԺԹ—ԺԴ դարե-
րում Խաչենի Զայալյանների քա-
ղաքական պատմությունը Զաքար-
յանների և ապա՝ մոնղոլական տի-
րապետության ժամանակաշրջա-
նում: Արձանագրում է այն փաս-
տը, որ Խաչենի Զայալյաններն ի-
րենց ձեռք են վերցնում նաև
Գանձասարում հաստատված Աղ-
վանից կաթողիկոսական զահր և
ժառանգարար օժիվում են կաթո-
ղիկոս: Նշում է Լանկ Թեմուրի կո-
ղուպիչ ոսղմարշավներից (ԺԴ
դար) և թուրք-պարսկական պա-
տերազմներից (ԺԶ—ԺԷ դդ.), հե-
տո ևս տեղական իշխանական սը-
ների գործունեությունը, ի տար-
բերություն Հայաստանի մյուս գա-
վանների, որ հայոց պետականու-
(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Քյունենների գործունեությունը մեծ էր դարերում հայկերի տարածքում ձևավորվելիս հինգ (համապի) մելիթություններ, որոնց 1603 թ. ձանաչեց Պարսկաստանի շահ Աբաս Ա-ն: Մինչև ժՔ դարը այստեղ էին սկզբնավորվում կամ պաշտպանություն գտնում հայոց պետականության վերականգնման և հոգեոր վերածննդի գրեթե բոլոր փորձերը (Հովսեփ Էմին, Խարաչի Օրի, Դավիթ Բեկ): Այնուամենայնիվ, արդեն ժՔ դարի առաջին կեսին թուրքական ցեղերից մեկի առաջնորդ փանահ Այի խաչը կարողացավ սղաագործել համայնի մելիթների միջև ծայր առած գծաությունները և ձևոր բերելով Շոշ բնակավայրը, մելիթ Շահնազարի հետ կառուցեց իր նստավայր Շուշի ամրոցը ու սկսեց կազմաց-կամաց իրեն Լեթարկել Արցախի տարածքը և մյուս մելիթներից մի քանիսին, սակայն ողջ տարածքը մինչև Ռուսաստանի կողմից Ղարաբաղի նվաճումը և դրանից հետո մնաց հայկական Այնտեղ գործել են բազմաթիվ հայկական գործոցներ, հրապարակվել են գրքեր և ամսագրեր: Այս ընթացքում Ղարաբաղի հայ բնակչության մշակութային կյանքի կենտրոնն էր Շուշի քաղաքը:

Պատմական ակնարկի երկրորդ մասում կրող Մուրաֆյանն անդրադառնում է ժՔ դարի ընթացքում և Ի դարում Այսրկովկասի

վարչական բաժանմանը, ցույց է տալիս մյուս հայկական տարածքների մեջ Ղարաբաղի նշանակությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Այստեղ հեղինակն ավելի է ծանրանում Շուշի քաղաքի մշակութային կյանքին և նշում է, որ այն ժՔ դարի սկզբին երրորդ տեղն է զբաղում կոստանդնուպոլսից և Թիֆլիսից հետո ընթացում սովորող հայ ուսանողների թվով: Անդրադառնում է 1867 թ. Ռուսաստանում հայկական տարածքների նոր արհեստական բաժանմանը, ըստ որի Երևանի նահանգի մեջ են մտնում միայն Երևանի և Նախիջևանի գավառները, իսկ Ղարաբաղն ու Սյունիքը միացվում են Ելիզավետպոլի նահանգին, որ մեծամասնություն էին կազմում թաթարները: Ենչտում է Կովկասյան փոխարքաների և կենտրոնական կառավարության հակահայկական գործունեությունը, առանձնապես կանգ է առնում Ալեքսանդր Գ կայսեր զահ բարձրաևալուց հետո Ռուսական արևելյան բաղաբանություն կտրուկ շրջադարձի և 1896 թ. Նիկոլայ Բ-ի կողմից հայաստանց իշխան Գոյիցինին Այսրկովկասում նահանգապետ նշանակելու փաստի վրա:

Հեղինակը զուգահեռ է անցկացնում Օսմանյան Թուրքիայում 1895 թ. կոտորածներից հետո հայերի ինքնապաշտպանության և 1905 թ. ռուսական առաջին հեղափոխության տարիներին ցարիզմի հրահրմամբ սանձազերծված հայ-

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՑԱԽԻՆ

թաթարական պատերազմների միջև, որի զլխավոր կենտրոններից մեկը դարձյալ Ղարաբաղն էր: Այդ ժամանակ հայկական շարժեր տեղի ունեցան Բաքվում և Նախիջևանում: 1908 թ. հետո Ղարաբաղի պատմական ճակատագիրը հեղինակը բացատրում է տարածաշրջանի վրա երիտթուրքերի պանթուրքական քաղաքականության ազդեցությամբ: Այսրկովկասյան հանրապետությունների և Քեմալական Թուրքիայի փոխհարաբերությունների ետնախորքի վրա ցույց է տալիս Ղարաբաղի ժողովրդի քաղաքական պատմությունը 1918—1921 թվականներին: Անդրադառնալով Ղարաբաղում ստեղծված Ազգային խորհրդի գործունեությունը, որը փաստորեն դարձել էր այդ տարածքի իսկական իշխանությունը և պայքարում էր օսմանյան, «սպա» բնակչական Թուրքիայի բանակների և մուսավաթական բանգանների դեմ, հեղինակն ապացուցում է, որ վերջիններին նպատակն էր ընչել Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման համար մղվող արդարացի պայքարը: Թուրքական բաղաբանության այսրկովկասյան այս սանձությունները ստանում

էին նաև անգլիական կառավարության աջակցությունը, որը թույլ տվեց զենքալ Անդրանիկին իր գործերով պաշտպանել զարաբաղցիների դատը: Կրող Մուրաֆյանը արդարացիորեն Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը համեմատում է ֆրանսիական կառավարության քաղաքականության հետ Կիլիկիայի նկատմամբ, շեշտելով, որ երկու դեպքում էլ նպատակը մեկն էր՝ նվաճողներին հանձնել բուն հայկական տարածքները: Այնուհետև նա անդրադառնում է Շուշիի հրդեհի և հայկական բնակչության շարժերի պատմությունը, որից հետո բաղաբը դառնում է մուսավաթականների հենակետը Ղարաբաղում:

Ազրբեյջանի և Հայաստանի խորհրդայնացման պատմության հոնախորքի վրա ցույց է տրվում Արցախի բնակչության Հայկական խՍՀ-ի նախավորվելու պայքարը խորհրդայնացման առաջին ամիսներին և 1920—1921 թվականներին և ընդգծում է 1921 թ. Նուրիսի 5-ի Կավրյուրոյի որոշման հրավական հիմքից զուրկ լինելը: Կրող Մուրաֆյանը իրավացիորեն այդ իրադարձությունը համեմատում է Նախիջևանում ստեղծված

միևակի հետ, որը քեմալական Թուրքիայի որոշմամբ ամրակցվել է Ազրբեյջանական Հանրապետությանը և խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում իսպառ հայաթափ արվեց: Այնուհետև, ընթերցողի ուշադրությունն է հրավիրվում Այսրկովկասյան ֆեդերացիայի դարաբաղյան քաղաքականության կիվելների վրա: Այդ առումով ուշադրավ են հեղինակի զիտարկումները: Կարմիր Թուրքիստանի նրկատմամբ վարած քաղաքականության վերաբերյալ, ընդգծելով, որ նույն քաղաքականությունը կիրառվել է նաև Ղարաբաղի հայկների նկատմամբ, որի հետևանքով հայ բնակչության զանգվածային արտահոսք էր տեղի ունենում վելի խորհրդային Միության տարներ հանրապետություններ: Երկրում են միևակայրական տվյալներ, ըստ որոնց 1926—1979 թթ. Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը ափնացել է 10,2 տոկոսով, իսկ «ազրբեյջանական»՝ 200 տոկոսով, այն դեպքում, երբ Սյունիքի հայ ազգաբնակչությունը ափնացել է 120 տոկոսով (ի դեպ, նախիջևանը նույն ժամանակահիշ-

ցին ընդհանրապես զրկվել է հայ բնակչությունից): Խորհրդայնացման 70 տարիների ընթացքում Ղարաբաղը միշտ փորձեր է կատարել միավորվել մայր հայրենիքի հետ: Գեոևա 20-ական թվականներին ըստեղծվել էր «Ղարաբաղ» Հայաստանին» կազմակերպությունը, որի մեջ էին մտնում տարբեր բաղաբական կուսակցությունների ներկայացուցիչներ: 1927 թ. Ղարաբաղի 7 հայեր, փախելով Երևան, այնտեղից նամակ են ուղարկել Փարիզի հայկական «Ցառաջ» պարբերականին, որ խոսվում էր մարզում, տիրող բռնությունների և ազգային տրամապատվության ստանալու մասին: 1927 թ. «Ղարաբաղ» Հայաստանին» կազմակերպությունը ոչնչացվում է: 1929 թ. Ազրբեյջանում նոր հիտտերիա է բարձրանում զարաբաղյան հարցի շուրջ: Հայաստանի այն ժամանակվա կառավարությունը Ազախի ետնջանի զլխավորությամբ պահանջում էր Ղարաբաղը վերամիավորել Հայաստանին, սակայն այդ շարժումը ևս ենթարկվեց հայաչության ցույցերին ու ելույթներին:

Խորհրդային Միությունում սկսված վերակառուցման քաղաքական կուրսը նոր թափ հաղորդեց Արցախյան շարժմանը, որի զագաթնակետը դարձավ 1988 թ. փետրվարը, երբ Ղարաբաղի ինքնավար մարզի ղեկուսատաների խորհուրդը որոշում ընդունեց մարզը վերամիավորելու Հայաստանի հետ: Ոտքի ելան Արցախի և Հայաստանի բնակչությունը, ամբողջ աշխարհը ցնցեցին Սրբվանի միլիոնանոց ազգաբնակչության ցույցերն ու ելույթները:

սպանվեց Բերիսյի ձեռքով: Այնուհետև, 1945 թ. Հայաստանի կենտկոմի այն ժամանակվա քարտուղար Գր. Հարությունյանը կրկին բարձրացրեց այդ հարցը, սակայն արդյունքի հասավ: Հարցը մեկ սեղամ էլ բարձրացվեց Խրուշչովի իշխանության տարիներին, որին ազրբեյջանցիները պատասխանեցին Լեոնային Ղարաբաղում 18 մարդու սպանություն: Այդ շարժման զագաթնակետը դարձավ 1965 թ. Երևանում տեղի ունեցած ցույցը, որ պահանջում էին Հայաստանին վերադարձնել Թուրքիային և Ազրբեյջանին տրված տարածքները: Ընդցման տարիներին այդ շարժումը կրկին անցավ ընդհատակ, սակայն ժամանակ առ ժամանակ իրեն զգացնել էր տալիս, ընայած Ազրբեյջանի ղեկավարությունը մարզի ղեկավարներին անձամբ էր նշանակում, պահանջելով նրանցից արմատախիլ անել «ազգայնական» և «չոչնակցական» գործիչներին:

Խորհրդային Միությունում սկսված վերակառուցման քաղաքական կուրսը նոր թափ հաղորդեց Արցախյան շարժմանը, որի զագաթնակետը դարձավ 1988 թ. փետրվարը, երբ Ղարաբաղի ինքնավար մարզի ղեկուսատաների խորհուրդը որոշում ընդունեց մարզը վերամիավորելու Հայաստանի հետ: Ոտքի ելան Արցախի և Հայաստանի բնակչությունը, ամբողջ աշխարհը ցնցեցին Սրբվանի միլիոնանոց ազգաբնակչության ցույցերն ու ելույթները:

Գեոնկրատական այս շարժումը նրա հակառակորդները խանցին սուվալթիան և Ազրբեյջանի պանթուրքիստան և Ազրբեյջանի կական բնակչության վրա ազդելով: Այդ նույն քաղաքականության հետևանքն էր 1965 թ. անմիջապես հետո շարժումը կավարող գործիչների մարտի ընթացքում: Այնուհետև, 1989 թ. մայիսի 31-ը, ժողովրդի միահամուռ պահանջից ազատ արձակվեցին Գրքի երրորդ մասում հեղինակները թարգմանաբար հրատարակել են 1920 և 1988 թթ. Հայաստանում և Ազրբեյջանում տրակված մի շարք վավերագրեր: Դրանք վերաբերում են Ղարաբաղի լուծման եղանակներին:

Պատրիկ Տոնապետյանը և Արմեն Մուրաֆյանը հասկանալի ենց զլխավոր նպատակն են ընդացել են պատմական իրությունների և ազգային իրականության միջոցով ցույց տալու սկզբունքային դրաբնարկման միջոցով ցույց տանալու համար միջազգային ընկերությունը իրեն հասանալի ինքնորոշման իրավունք:

ԱԶՍՍ ՔՈՅՄ
ՀեՍՀ ԳԱ արևելագիտության
ինստիտուտի գիտաշխատակց
պատմ. գիտ. թեկնածու